ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի հոկտեմբերի 7-11-ը Ճապոնիայի մայրաքաղաք Տոկիոյում կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

Արևհատ Պողոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության ճանապարհային քաղաքականության բաժնի պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ճապոնիա, մայրաքաղաք Տոկիո, 2024թ. հոկտեմբերի 7-11-ը

4. **Հրավիրող կողմը.**

Ասիական զարգացման բանկ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Ասիա-խաղաղօվկիանոսյան ճանապարհային անվտանգության դիտակետի (APRSO) տարեկան համաժողովին և ճանաչողական այցին մասնակցություն, որը ուղղված էր դիտակետի անդամ երկրների ճանապարհային անվտանգության հիմնախնդիրներին և մարտահրավերներին:

6. **Քննարկված թեմաները.**

Միջոցառմանը մասնակցում էին Ասիայի և Խաղաղօվկիանոսյան երկրների պետական համակարգի ներկայացուցիչները, ԱԶԲ-ն, ՅՈՒՆԻՍԵՖ-ը, Համաշխարհային բանկը, Համաշխարհային ռեսուրսների ինստիտուտի (World Resources Institute), Գլոբալ ճանապարհային անվտանգության լուծումներ (GRSS), FIA հիմնադրամի, iRAP-ի, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA), Ճապոնիայի հողի, ենթակառուցվածքների, տրանսպորտի և զբոսաշրջության նախարարության, ինչպես նաև Ճապոնիայի ճանապարհային անվտանգության ոլորտի մասնավոր հատվածի կազմակերպությունները, հետազոտական և ակադեմիական հաստատությունները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները

Միջոցառման ընթացքում ներկայացվել են հետևյալ թեմաները.

- Ճանապարհային անվտանգության ոլորտում Ճապոնիայի կառավարության փորձը.
- Ակնարկ ապահով և ապրելու համար հարմար փողոցների վերաբերյալ.
- Ապահով և կայուն տրանսպորտային համակարգ.
- Քաղաքային տարածքներում ճանապարհային անվտանգության մարտահրավերները.
- Ճանապարհային անվտանգության կառավարումը,
- Երթևեկության մասնակիցների և հատկապես՝ խոցելի խմբերի անվտանգությունը,
- Մասնավոր հատվածի կողմից ճանապարհային անվտանգության ոլորտում իրականացվող գործողությունները:

2024 թվականի հոկտեմբերի 10-11-ը իրականացվել են ճանաչողական այցեր՝

- Տոկիոյի Ճանապարհային երթևեկության կառավարման կենտրոն, որի ընթացքում ներկայացվել է քաղաքի ճանապարհային երթևեկության հսկողության մեխանիզմները, որից հետո ծանոթացել ենք Տոկիո քաղաքի փողոցների երթևեկության կազմակերպման հսկողության և ճանապարհների կահավորանքին.
- Ուցունոմիա արբանյակային քաղաքում տրանսպորտի և հանրային տարածքների առկա կարգավորումները, վերափոխման տեսլականը, հանրային քաղաքականության և պլանավորման ծրագրերը և ճանապարհային ենթակառուցվածքների մոդելավորման հեռանկարները.
- Honda-ի տրանսպորտային միջոցների արտադրության անվտանգության հետազոտական կենտրոն, որտեղ ներկայացվել է Honda-ի կողմից ճանապարհային անվտանգության մակարդակի բարցարացման նպատակով վերջիններիս կողմից իրականացվող քայլերը: Խումբը այցելել է նաև ավտովթարի փորձարկման լաբորատորյա, որտեղ կազմակերպության կողմից ներկայացվել է երթևեկության ընթացքում երթևեկության մասնակիցների անվտանգության թեստավորման համակարգը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Միջոցառման ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել ԱԶԲ-ի, ՀԲ-ի, iRAP կազմակերպության, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA), Ճանապարհային անվտանգության գլոբալ համագործակցության, Ասիայի և Խաղաղօվկանոսյան երկրերի ճանապարհային անվտանգության ոլորտի պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվել է ճանապարհային անվտանգության ոլորտում Ասիայի և Խաղաղօվկանոսյան երկրերի մարտահրավերները. որոնք կիսվել են իրենց երկրերում առկա փորձով և հնարավորություններով: Հանդիպումների ընթացքում ներկայացրել եմ Հայաստանի ճանապարհային անվտանգության ոլորտում Հասատանի

մարտահրավերները, ինչպես նաև ճանապարհային ենթակառուցվածքների անվտանգության կառավարման համակարգի ներդրման համար Հայաստանի կարիքները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Միջոցառման ընթացքում որպես APRSO Հայաստանի ներկայացուցիչ մասնակցել եմ Ասիական Խաղաղօվկիանոսյան ճանապարհային անվտանգության դիտակետի գլխավոր ասամբլեայի տարեկան ժողովին, որի ընթացքում քննարկվել է դիտակետի անդամ երկրների ճանապարհային անվտանգության կառավարման մեխանիզմերը և առկա խնդիրները:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի շրջանակներում տեղի ունեցած հանդիպումների և քննարկումների արդյունքում Ճապոնիայի կառավարության կողմից ճանապարհային անվտանգության ոլորտում իրականացվող ծրագրերը և վերջինիս փորձը օգտակար կլինի Հայաստանում ճանապարհային անվտանգության, մասնավորապես ճանապարհային ենթակառուցվածքների անվտանգության բարեփոխումների իրականացման համար:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

16.10.2024թ.